ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԼ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ-2017

11-րդ դասարան

Ա: Աշխատանք բնագրով: (15 միավոր)

Հոկտեմբեր ամիսն էր. Մարկոս Անտոնիոսի՝ առյուծ լծած կառքը երևաց Տարսոնում: Գեղեցիկ է Մեծ ծովի ափին բազմած Տարսոնը. լազուր ջրերի ծփանքը կարող ես տեսնել դեռ հեռվից: Մեղմասահ ընթացք ունի Տարսոնին առընթեր հոսող Կիդնես գետը: Եռապետը քաղաքը լցրել էր աճպարարների և նվագածուների հոծ խմբերով: Եգիպտոսի թագուհին գալիս էր՝ Մարկոս Անտոնիոսի առջև խոնարհվելու: Երևաց Կլեոպատրայի շքախումբը. ծիրանավառ, մետաքսահյուս առագաստներով ոսկեզօծ նավի վրա շքեղաշուք հանդերձներով նստել էր թագուհին՝ որպես գեղեցկության աստվածուհի: Նավազներն արծաթազօծ թիերը շարժում էին՝ համաչափելով սրինգ-ների հոգեպարար երաժշտությունը: Ամենուրեք գինարբուք էր. մարդիկ կարծես դարձել էին Բաքոսի երկրպագուներ : Կլեոպատրայի գլխավերևում ոսկեփայլ ամպ-հովանին էր. մի քանի պարմանուհիներ հովհարում էին թագուհու շուրջը, իսկ նա-ժիստները շարժում էին երփներանգ ծաղկեփնջերը՝ գետի երկու կողմերը լցնելով զգլխիչ բուրմունքով: Թվում էր՝ չնաշխարհիկ Աֆրոդիտեն դուրս էր եկել Մեծ ծովից և զբոսանք էր կատարում Կիդնեսի վրա:

1. Գրե՛ք՝ որտեղից է առաջացել **հոկտեմբեր** ամսանունը. տվե՛ք ծագման մեկնաբանությունը: **(2 միավոր)**

2. Նշե՛ք՝ որտեղից է ծագում « Բաքոսի երկրպագու» արտահայտությունը,և երբ է այն կիրառվում: **(2միավոր)**

3. Գրե՛ք **առյուծ** բառով կազմված երեք դարձվածք և բացատրե՛ք նրանց իմաստները: **(2միավոր)**

4.**Աճպարար, նվագածու, առընթեր, պարմանուհի** բառերի դիմաց գրե՛ք մեկական հոմանիշ բառ: **(2 միավոր)**

5.Գրե՛ք **նվագածու, հովհար, գինարբուք** բառերի հարանունները և բացատրե՛ք իմաստները: **(1 միավոր)**

6.Տեքստում որո՞նք են **նավաստի, մավի, ստվար, արբեցնող, աղախին** բառերի հոմանիշները: **(1 միավոր)**

7.**Առընթեր** բառում նշե՛ք կատարված հնչունափոխությունը, նշե՛ք բաղադրիչները: **Թեր** արմատը ի՞նչ իմաստով է գործածված: Գրե՛ք նույն արմատի համանուն բառը և բացատրե՛ք իմաստը: **(2 միավոր)**

8.**Հանդերձ, դուրս, կարծես, շուրջ** բառերը տեքստում ի՞նչ խոսքի մասերի արժեքներով են հանդես եկել : Ուրիշ ի՞նչ խոսքիմասային պատկանելություն ունեն նշված բառերը: **(2 միավոր)**

9.**Մեծ ծով** բաղադրյալ հատուկ անվան նմանողությամբ գրե՛ք որակական ածական պարունակող չորս ծովի անուն: **(1 միավոր)**

Բ. Շարադրություն՝ « Ի՞նչ են պատմում հուշարձանները » վերնագրով (երկու էջի սահմաններում) : (5 միավոր)

Հանրապետական օլիմպիադայի նախագահ՝ մ.գ.թ., դոցենտ Գ. Խալաթյան